ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա.Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 05

04 հունիսի 2019 թվական

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 7 (յոթ) անդամներ:

Բացակա էին Հայկազ Բաղդասարյանը, Արման Խանզադյանը, Վարդան Սուքիասյանը և Հայկ Վարդևանյանը:

<u>Ավագանու նիստին մասնակցում էին՝</u>

Բյուրեղավան համայնքի Նուռնուս բնակավայրի վարչական ղեկավար Մնացական Գևորգյանը, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը և համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Դանիել Դանիելյանը:

<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը:</u>

<u>Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի բարտուղար Լիլիթ Ավուշյանը:</u>

Մինչև նիստի օրակարգին անցնելը համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը հայտարարեց, որ ավագանու տասնմեկ անդամներից նիստին ներկա են յոթը, քվորումն ապահովված է և առաջարկեց սկսել նիստը:

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 04 –Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի հունիսի 04-ի արտահերթ նիստի օրակարգը՝

1)Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին,

2)Բյուրեղավան համայնքում տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ- 7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 38-Ա/

Օրակարգը հաստատելուց հետո ներկայացվեցին որոշումների նախագծերը:

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ և 30-րդ հոդվածների, Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի և հիմք ընդունելով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2019 թվականի մայիսի 16-ի N30 եզրակացությունն ու «ԿԱՊԵԼՈ ԲԻԱՆԿՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դիմումը՝ ավագանին որոշում է.

1.«ԿԱՊԵԼՈ ԲԻԱՆԿՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Ձրաբեր գյուղի 07-055-0212-0091 ծածկագրով (վկայական

N 15022019-07-0002) 0.73 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության հողերի, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների:

2.«ԿԱՊԵԼՈ ԲԻԱՆԿՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ Բյուրեղավանի համայնքապետարանի 900105226170 հաշվեհամարին վճարել 2.126.600 (երկու միլիոն հարյուր քսանվեց հազար վեց հարյուր) դրամ՝ սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության համար:

3.Բյուրեղավան համայնքի ղեկավարին՝ սույն որոշման 1-ին կետով նշված հողամասի նպատակային և գործառնական նշանակությունների կատարված փոփոխությունների մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանմանը և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ- 7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 39-Ա/

<u>Լսեցին</u>
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ (ԿԱՄ) ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 4-րդ հոդվածի՝ ավագանին որոշում է.

1.Հաստատել Բյուրեղավան համայնքում տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառման կարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ- 7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 40-Ա/

Օրակարգի հարցերը սպառվեցին:

Ավագանու նիստն ավարտվեց:

Ավագանու անդամներ՝

ԳԵՈՐԳԻ ԱՂԱՋԱՆՅԱՆ _____

ՎԱՀՐԱՄ ԱՊՐԵՍՅԱՆ _____

ԱՎԵՏԻՔ ԱՍՈՅԱՆ _____

ԱՐՏՅՈՄ ԱՎԱԳՅԱՆ _____

ՍԼԱՎԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ԱՐԳԱՄ ՇԱՌՅԱՆ _____

ԱՐՄԱՆ ՕՀԱՆՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ _____ Լ. ԱՎՈՒՇՅԱՆ